ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«16» հունվարի 2017 թվականի № 03-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամի կողմից բարձրացված՝ «Նոր Ամբերդ» և «Արագած» գիտական կայանների էլեկտրամատակարարման խնդիրն ուսումնասիրելու և լուծում առաջարկելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Ա.Ջուլիկյան	- «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կենտրոնական կառավարման ծառայության պետ (խմբի ղեկավար)
Գ.Մնացականյան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության կենտրոնական միջմարզային բաժնի գլխավոր մասնագետ
Կ.Հովսեփյան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ատոմային էներգետիկայի բաժնի առաջատար մասնագետ
Վ.Քիրեջյան	- «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի էլեկտրական էներգիայի հզորության և կորուստների հաշվառման բաժնի պետի տեղակալ
Ս.Հայրապետյան	- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ բարձրավոլտ ցանցերի սպասարկման ծառայության պետ (համաձայնությամբ)
Գ.Ռուշանյան	- ՀՀ Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամի գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ)

2. Աշխատանքային խմբին՝ ուսումնասիրել «Նոր Ամբերդ» և «Արագած» գիտական կայանների էլեկտրամատակարարման ապահովման հետ կապված խնդիրը և մինչև 2017 թվականի փետրվարի 6-ը ներկայացնել առաջարկություն:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ